ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ *

ՀՏԴ 316.334.3 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-224*

ԾՈՎԻՆԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հանրային հաղորդակցության և լրագրության գիտաուսումնական կենտրոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tsovinar.khachatryan@mail.com
ORCID: 0009-0002-8660-0711

Հոդվածի նպատակն է վերլուծել քաղաքական զսպվածության երևույթը Հայաստանի Հանրապետությունում՝ դիտարկելով դրա իրավական, սոցիալական և մշակութային հիմքերը և դրսևորումները տարբեր հասարակական հարթակներում:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրվել ենք հետևյալ խնդիրները՝ քաղաքական զսպվածության պատմական, իրավական և սոցիալական հիմքերի ուսումնասիրություն, քաղաքական զսպվածության դրսևորումների վերլուծություն՝ պետական կառավարման, հանրային ծառայության, մեդիայի և հասարակական դիսկուրսի մակարդակներում, քաղաքացիական հասարակության, մեդիագրագիտության և կրթության դերի բացահայտում՝ քաղաքական զսպվածության հաղթահարման գործընթացում, քաղաքական զսպվածության հետևանքների գնահատում՝ սոցիալական պիտակավորումից մինչև քաղաքացիական անտարբերություն և ինքնագրաքննություն:

Կիրառվել են սոցիոլոգիական և իրավական վերլուծության մեթոդներ: Տվյալների աղբյուրներն են՝ գիտական գրականությունը, օրենսդրական փաստաթղթերը, սոցիոլոգիական հարցումները և մեդիա վերլուծությունները:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ քաղաքական զսպվածությունը Հայաստանում բազմաշերտ երևույթ է, որի հաղթահարումը պահանջում է համակարգային մոտեցում՝ համադրելով իրավական բարեփոխումները, կրթական ծրագրերը և հանրային դիսկուրսի բազմազանությունը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հավասարակշռել խոսքի ազատության և հանրային պատասխանատվության պահանջները՝ խուսափելով ինչպես ինքնագրաքննության, այնպես էլ անսահմանափակ արտահայտման ծայրահեղություններից:

Հիմնաբառեր՝ *Քաղաքական զսպվածություն, խոսքի ազատություն, ինքնագրաքննություն, հասարակական դիսկուրս, քաղաքացիական հասարակություն, մեդիագրագիտություն, կրոնական էթիկա, սոցիալական նորմեր, մշակութային փոփոխություններ, հանրային ծառայություն:*

Ներածություն

Ժամանակակից հասարակություններում քաղաքական չեզոքությունը և քաղաքական զսպվածությունը դարձել են սոցիալական դիսկուրսի և հանրային խոսույթի կարևորագույն բաղադրիչներ: Մի կողմից, դրանք ծառայում են որպես

* Հոդվածը ներկայացվել է 26.05.2025թ., գրախոսվել՝ 27.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

քաղաքակիրթ հաղորդակցության և հարգալից երկխոսության հիմքեր, մյուս կողմից՝ հաճախ վերածվում են լռության և ինքնագրաքննության խոչընդոտների: Պատմական տեսանկյունից, քաղաքական զսպվածության հասկացությունը ենթարկվել է զգալի փոխակերպումների՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և, հատկապես, Սառը պատերազմի ժամանակաշրջանում: Այս էվոլյուցիան բերել է գաղափարի վերաիմաստավորման՝ ներառելով էական բարոյական, էթիկական և հասարակական տարրեր, որոնք հաճախ գերազանցում են նրա նախնական քաղաքական բովանդակությունը:

Ներկայիս համաշխարհային քաղաքական և տեղեկատվական լանդշաֆտում, երբ հաղորդակցման տեխնոլոգիաները տալիս են խոսքի արտահայտման աննախադեպ հնարավորություններ, քաղաքական զսպվածության սահմանները դառնում են առավել անորոշ և վիճելի: Սոցիալական մեդիայի մուտքը հանրային տարածք էականորեն փոխել է քաղաքական զսպվածության կիրառման առանձնահատկությունները՝ խախտելով պաշտոնական և անձնական խոսույթի միջև եղած ավանդական սահմանները: Սա հատկապես զգալի է հետխորհրդային երկրներում, որտեղ քաղաքական մշակույթը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, իսկ մամուլի և խոսքի ազատությունը հաճախ հակադրվում են ազգային անվտանգության և սոցիալական կայունության մտահոգություններին:

Քաղաքական զսպվածության դիսկուրսն անմիջականորեն առնչվում է իշխանության և ուժի հարաբերություններին, ինչպես նաև հասարակության մեջ արժեքային համակարգերի փոփոխություններին: Ըստ Միշել Ֆուկոյի իշխանության տեսության՝ «զսպվածությունը» կարող է գործել որպես «իշխանության մանրադիտակային մեխանիզմ», որը կարգավորում է խոսքը և հասարակական վարքագիծը: Այն մի կողմից ապահովում է քաղաքակիրթ հարաբերություններ, մյուս կողմից՝ կարող է վերածվել գաղափարախոսական վերահսկողության և սահմանափակումների միջոցի:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անցումային ժողովրդավարություն, բախվում է առանձնահատուկ մարտահրավերների՝ քաղաքական զսպվածության համատեքստում: Խորհրդային երկարատև իշխանության ժառանգությունը, 2018թ. թավշյա հեղափոխությունը, տարածաշրջանային անվտանգության մարտահրավերները և մշակութային-քաղաքական կողմնորոշման շուրջ ընթացող բանավեճերը ստեղծել են բարդ միջավայր, որտեղ ձևավորվում են ժամանակակից հայկական քաղաքական դիսկուրսի նորմերը:

Պետական կառույցներում և հանրային ծառայության ոլորտում քաղաքական զսպվածության պահանջները առանձնահատուկ նշանակություն ունեն: Հայաստանյան օրենսդրությունն այս հարցում հիմնվում է միջազգային փորձի և երկրի սահմանադրական սկզբունքների վրա: Հանրային ծառայողների համար սահմանված վարքականոնները և էթիկայի կանոնները հաճախ պահանջում են քաղաքական չեզոքություն և զսպվածություն: Սակայն գործնականում այս պահանջների կիրառումը բախվում է բազմաթիվ խնդիրների, հատկապես՝ անձնական և պաշտոնական դերերի տարանջատման տեսանկյունից:

Միջազգային համատեքստում կարևոր է հասկանալ, որ քաղաքական զսպվածության գաղափարը տարբեր մշակույթներում և քաղաքական համակարգերում ունի տարբեր դրսևորումներ: Արևմտյան ժողովրդավարություններում այն հաճախ կապվում է ներառականության և բազմազանության արժեքների հետ, մինչդեռ այլ համակարգերում այն կարող է դիտարկվել որպես քաղաքական կայունության կամ ազգային միասնության պահպանման միջոց: Սա ցույց է տալիս, որ քաղաքական զսպվածությունը ոչ միայն լեզվական, այլև մշակութային-քաղաքական երևույթ է:

Քաղաքական չեզոքության իրավական հիմքերը և գործնական դրսևորումները

Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ զինված ուժերը կոչված են ապահովելու երկրի անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև սահմանների անձեռնմխելիությունը: Միևնույն ժամանակ, սահմանադրությունը պարտադրում է զինված ուժերին պահպանել քաղաքական չեզոքություն և գտնվել քաղաքացիական վերահսկողության ներքո: Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության գործառույթները սահմանադրորեն հստակեցված չեն, սակայն, որպես կանոն, ոստիկանությունը պատասխանատու է օրենքի գերակայության, հասարակական կարգի, քաղաքացիների կյանքի և ունեցվածքի պահպանության համար:

ԵԱՀԿ Անվտանգության ռազմաքաղաքական հարցերի օրենսգիրքը, ինչպես նաև ՄԱԿ-ի փաստաթղթերը ընդգծում են զինված ուժերի քաղաքական չեզոքության և քաղաքացիական վերահսկողության պահանջը: Այս սկզբունքները կարևոր են ոչ միայն իրավական տեսանկյունից, այլև քաղաքական կայունության և հասարակության վստահության պահպանման համար: Վերջին տարիների իրադարձությունները ցույց են տալիս, որ զինված ուժերի կամ ոստիկանության քաղաքական գործընթացներին միջամտությունը կարող է խորացնել ճգնաժամը, խախտել սահմանադրական կարգը և վտանգել պետության միջազգային հեղինակությունը:

Հայաստանում ռազմական դրության և արտակարգ դրության իրավական կարգավորումները հաճախ օգտագործվել են ոչ միայն արտաքին վտանգների կանխման, այլև ներքին քաղաքական զարգացումների կառավարման նպատակով: Այս կարգավիճակների սահմանման և կիրառման գործընթացում հաճախ առաջանում է իրավական և տերմինաբանական քաոս, ինչը բարդացնում է հասարակական ընկալումը և խոչընդոտում է արդյունավետ կառավարումը: Հայկական դատական պրակտիկան հուշում է, որ «քաղաքական չեզոքության» պահանջը հաճախ վերածվում է խոսքի ազատության սահմանափակման: Օրինակ՝ Վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ «Ա1+» հեռուստաընկերության լիցենզիայի չեղարկումը կարող էր դիտվել որպես անուղղակի ճնշում (ՀՀ Վճռաբեկ դատարան, կիրառական որոշում 2011): Հանրային ծառայողի վարքագծի էթիկայի հանձնաժողովի որոշումներից մի քանիսում արձանագրվել է, որ անգամ սոցիալական ցանցում հավանության նշանը («լայք») կարող է հակասել քաղաքական չեզոքության սկզբունքին (Էթիկայի հանձնաժողովի տարեկան զեկույց 2022): Այս ամենը ցույց է տալիս, որ իրավական նորմերի անորոշությունը հանգեցնում է ինքնագրաքննության ինստիտուցիոնալացման:

Քաղաքական զսպվածության սոցիալական և մշակութային գործոնները

Քաղաքական զսպվածությունն ու չեզոքությունը Հայաստանում պայմանավորված են ոչ միայն իրավական նորմերով, այլև խորքային սոցիալական և մշակութային գործոններով: Պետական կառույցներում, հանրային ծառայության ոլորտում, ինչպես նաև մեդիայի և հասարակական դիսկուրսի մակարդակներում քաղաքական զսպվածության դրսևորումները հաճախ արտացոլում են հասարակության արժեքային համակարգի առանձնահատկությունները:

Հայաստանյան հասարակության բևեռացվածությունը, քաղաքական տարբեր բևեռների առկայությունը և որևէ բևեռի չպատկանող քաղաքացիների մարգինալացումը նպաստում են քաղաքական զսպվածության տարածմանը: Քաղաքացիական հասարակության որոշ հատվածներ, որոնք նախկինում ակտիվ մասնակցություն են ունեցել հանրային շարժումներին, ներկայումս դուրս են մնում քաղաքական գործընթացներից՝ իրենց զգալով անտեսված և օտարացած: Այս խմբերը հաճախ ենթարկվում են պիտակավորման և ատելության խոսքի, ինչը խորացնում է

հասարակական պառակտումը և նվազեցնում է քաղաքական մասնակցության մակարդակը: Քաղաքական զսպվածության երևույթը կարելի է դիտարկել ոչ միայն որպես իրավական կամ վարչական պահանջ, այլև՝ որպես հասարակագիտական կատեգորիա: Գաբրիել Ալելմոնդի և Սիդնի Վերբայի «քաղաքացիական մշակույթի» (Almond & Verba 1963) մոտեցումը ցույց է տալիս, որ քաղաքացիական մասնակցության ձևերը պայմանավորված են արժեքների և քաղաքական մասնակցության նկատմամբ չգրված նորմերի համակարգով: Պիեռ Բուրդիեի «խոսքի իշխանության» (Bourdieu 1991) գաղափարի համադրումից պարզ է դառնում, որ քաղաքական զսպվածությունը գործնականում վերածվում է «սիմվոլիկ դաշտում» գործող ինքնակարգավորող ուժի: Այս մեկնաբանությունը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է հասարակության մեջ լռությունը վերածվում լեգիտիմացված սոցիալական վարքագծի:

Քաղաքացիական հասարակության դերը և խոսքի ազատության սահմանափակումները

Քաղաքացիական հասարակության ինստիտուտները, մեդիագրագիտության և քաղաքացիական կրթության ծրագրերը կարող են կարևոր դեր խաղալ քաղաքական զսպվածության հաղթահարման գործընթացում: Սակայն խոսքի ազատության սահմանադրական երաշխիքները հաճախ բախվում են օրենսդրական և գործնական սահմանափակումների: Սոցիալական մեդիայի տարածումը, տեղեկատվական դաշտի բազմազանությունը և հանրային դիսկուրսի փոփոխվող բնույթը նոր մարտահրավերներ են ստեղծում ինչպես իշխանությունների, այնպես էլ հասարակության համար:

Քաղաքական զսպվածության հետևանքներից են ինքնագրաքննությունը, սոցիալական պիտակավորումը, քաղաքացիական անտարբերությունը: Այս երևույթները խոչընդոտում են ժողովրդավարական մշակույթի ձևավորմանը և հանրային դիսկուրսի բազմազանությանը:

Միջազգային փորձը և համեմատական դիտարկումներ

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ բանակի, ոստիկանության կամ անվտանգության ծառայությունների քաղաքական գործընթացներին միջամտությունը սովորաբար արժանանում է միջազգային հանրության քննադատությանը: Նման միջամտությունները կարճաժամկետ հեռանկարում կարող են ապահովել իշխանության պահպանում, սակայն երկարաժամկետ հեռանկարում հանգեցնում են լեգիտիմության կորստի, մեկուսացման, բարեփոխումների դանդաղեցման և պատասխանատվության խնդիրների առաջացման: Միևնույն ժամանակ, որոշ դեպքերում բանակի չեզոքությունը կամ չմիջամտելը նպաստել է քաղաքական խաղաղ փոփոխություններին:

Քաղաքական զսպվածության էվոլյուցիան

Աշխարհն այնպիսի փուլում է, որ նույնիսկ բազմակարծությունը ստիպված է լինում քաղաքական զսպվածություն դրսևորել: Քաղաքական զսպվածության հասկացությունը ժամանակի ընթացքում էական փոփոխությունների է ենթարկվել՝ վերածվելով ոչ միայն խոսքի սահմանափակման, այլև քաղաքական էթիկայի հիմնարար տարրի: Եթե սկզբնական շրջանում այն վերաբերում էր որոշակի բառերի կամ արտահայտությունների օգտագործումից խուսափելուն, ապա ներկայում այն ներառում է նաև քաղաքական իրադարձությունների հրապարակային գնահատականների զսպում և վերահմաստավորում:

Նորբերտ Էլիասը, անդրադառնալով «քաղաքական զսպվածության» քաղաքակրթական դերին, նշում է, որ ժամանակակից պետությունների համակարգում ձևավորվել են սոցիալական ստանդարտներ, որոնք խթանում են ինքնազսպվածության և փոխադարձ հարգանքի դրսևորումները: Այս գործընթացը,

ըստ Էլիասի, միտված է ոչ միայն բռնության և ագրեսիայի վերահսկմանը, այլև հասարակական փոխհարաբերությունների քաղաքակրթմանը (Էլիաս 45–47): Ժամանակակից հասարակություններում քաղաքական զսպվածությունը հաճախ դիտարկվում է որպես երկակի երևույթ. այն կարող է նպաստել քաղաքակիրթ երկխոսությանն ու հանրային բանավեճի որակի բարձրացմանը, սակայն միաժամանակ կարող է վերածվել ինքնագրաքննության և հանրային դիսկուրսի սահմանափակման գործիքի: Այս խնդիրը հատկապես ակնառու է այն հասարակություններում, որտեղ պետական ինստիտուտները փորձում են սահմանափակել պաշտոնյաների կամ հանրային գործիչների արտահայտվելու ազատությունը՝ հղում անելով հանրային կարգի պահպանմանը:

Պատմականորեն, քաղաքական զսպվածության բացակայությունը հաճախ հանգեցրել է հասարակական լարվածության և իրավունքի խախտումների: Օրինակ՝ ԱՄՆ-ում մաքքարթիզմի ժամանակաշրջանում քաղաքական զսպվածության բացակայությունը հանգեցրեց զանգվածային հալածանքների, մինչդեռ հետագա տասնամյակներում՝ քաղաքացիական իրավունքների շարժման ընթացքում, քաղաքական զսպվածությունը սկսեց դիտարկվել որպես խտրականության դեմ պայքարի միջոց (Էլիաս 45–47):

Ներկայում քաղաքական զսպվածության դրական դրսևորում է համարվում մարդկանց և խմբերին պիտակավորումից հրաժարվելը, ինչպես նաև այնպիսի լեզվի կիրառումից խուսափելը, որը կարող է վիրավորել փոքրամասնություններին: Այս միտումը արտացոլում է հասարակության քաղաքակրթական զարգացման ընդհանուր տենդենցը, որը, ըստ Էլիասի, բնորոշ է ժամանակակից քաղաքական համակարգերին (Էլիաս 45–47):

Միևնույն ժամանակ, քաղաքական զսպվածության չափազանցումը կարող է հանգեցնել հանրային բանավեճի արհեստական սահմանափակման: Ինչպես նշում է Անդրյու Լինքլեյթերը, restraining power-ի ինստիտուցիոնալ մեխանիզմները կարող են դառնալ ինչպես քաղաքակիրթ փոխհարաբերությունների երաշխիք, այնպես էլ քաղաքական դիսկուրսի սահմանափակման գործիք (Linklater 102-105):

Այսպիսով՝ քաղաքական զսպվածության էվոլյուցիան անցել է մի ճանապարհ, որի ընթացքում այն վերածվել է հասարակական և ինստիտուցիոնալ նորմի, սակայն դրա՝ չափից ավելի կիրառումը կարող է հակասել խոսքի ազատության և ժողովրդավարական արժեքների զարգացմանը:

Քաղաքական զսպվածությունը Հայաստանում. իրավական և սոցիալական ասպեկտներ

Հայաստանում քաղաքական զսպվածության թեման հաճախ օգտագործվում է որպես հանրային ելույթներում ասելիքը կարճելու կամ դադարեցնելու միջոց: Հաճախ քաղաքական զսպվածության վկայակոչումը ծառայում է հարցազրույցները շրջանցելուն կամ դադարեցնելուն, ինչը դիտվում է որպես սպառիչ պատասխան՝ գերազանցելով սովորական «չեմ մեկնաբանում» կամ «հարցերը գրավոր ուղարկեք» արտահայտությունները: Այս երևույթը հատկապես դժվարացնում է լրագրողների աշխատանքը, որոնք սպասում են պաշտոնյաների պատասխաններին (CPFE, Annual Report, 14-15):

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանում է հանրային ծառայողների համար էթիկական կանոններ, որոնք պահանջում են զսպվածություն և անկողմնակալություն: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը ընդգծում է այն սկզբունքները, որոնք կարգավորում են հանրային ծառայողների հրապարակային խոսքը (ՀՀ օրենք «Հանրային ծառայության մասին», 23.03.2018, հոդված 32): Սակայն, ինչպես նշում է Ա. Հակոբյանը, այս օրենսդրական դրույթների կիրառումը հաճախ հակասական է և ոչ համակարգված, ինչը բարդացնում է քաղաքական զսպվածության գործնական կիրառումը (Հակոբյան 22-24):

Հետխորհրդային երկրներում, այդ թվում Հայաստանում, քաղաքական զսպվածությունը հաճախ ծառայել է որպես գործիք՝ իրական քաղաքական բանավեճից խուսափելու համար, ինչը մտահոգիչ է ժողովրդավարական զարգացման տեսանկյունից: Հայաստանի քաղաքական մշակույթում զսպվածության արմատները հասնում են խորհրդային ժամանակաշրջան, երբ քաղաքական այլախոհությունը ենթարկվում էր պատժի, և ձևավորված վախի մթնոլորտը որոշ չափով պահպանվել է անկախության տարիներին (Կարախանյան 56-58):

2008 թվականի մարտի 1-ի դեպքերը, որոնց ժամանակ ընդդիմության հանրահավաքը ցրվեց ուժի կիրառմամբ, խորացրին քաղաքական մասնակցության զսպվածությունը: Այս իրադարձությունը հանգեցրեց վախի մթնոլորտի հաստատման, որը խոչընդոտեց քաղաքական ակտիվությունը և նպաստեց զսպվածության պահպանմանը, հատկապես իշխող կուսակցության՝ ՀՀԿ-ի կողմից (Socioscope, Armenia after 2018: Social and Political Transformations, 31-33):

Քաղաքական զսպվածությունը հանգեցնում է հասարակական անտարբերության, որն արտահայտվում է ընտրություններին ցածր մասնակցությամբ և քաղաքացիական նախաձեռնությունների նվազմամբ: 2017թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցությունը կազմեց 60.86%, իսկ 2021թ.՝ 49.4%: 2021 թվականի համապետական ընտրություններին չմասնակցելու հիմնական պատճառներից են քաղաքական համակարգի նկատմամբ անվստահությունն ու ազդեցության հնարավորության նկատմամբ թերահավատությունը, ինչը մասամբ պայմանավորված է 44-օրյա պատերազմով և համավարակով (OGP, «Youth Participation in Democratic Processes and their Involvement in Armenia», 2021, էջ 17-18): «Կովկասյան բարոմետր» հետազոտության տվյալներով՝ 2019թ. հայաստանցիների միայն 22%-ն էր լիովին վստահում խորհրդարանին, իսկ 2021թ. ցուցանիշը իջել էր մինչև 19%, ինչը նպաստում է քաղաքական մասնակցության նվազմանը (Socioscope, Local Democracy in Armenia: Challenges and Opportunities, 44-45):

Վախի մթնոլորտը քաղաքական ակտիվության նկատմամբ արտահայտվում է տարբեր ձևերով՝ սկսած աշխատանքը կորցնելու վախից մինչև «իմ խոսքը կվնասի իմ հարազատներին» զգուշավորության մոտեցումներով: Մեր խորին համոզմամբ Արցախյան պատերազմների ընթացքում ձևավորված «ներքին թշնամու» կերպարը քաղաքական այլախոհությունը հաճախ դիտարկում է որպես «դավաճանություն», ինչը խթանում է ինքնագրաքննությունը և զսպվածությունը:

2023թ. «Մեդիա ազատության ինդեքս» զեկույցը փաստում է, որ Հայաստանի լրագրողների 13%-ը խուսափում է որոշակի թեմաներ լուսաբանելուց՝ հնարավոր հետապնդումներից վախենալով: Ազգային անվտանգության, կոռուպցիայի և օլիգարխների մասին թեմաները հատկապես զգայուն են: Նույն զեկույցը նշում է, որ 2022թ. մի շարք պետական հիմնարկների աշխատակիցներ, որոնք մասնակցել էին հակակառավարական ցույցերին, ենթարկվել են ոչ պաշտոնական ճնշումների, իսկ որոշները կորցրել են աշխատանքը (CPFE, «Annual Report 2023», էջ 21-22):

Հայաստանյան հասարակությունում առկա է «լռության մշակույթ», երբ մարդիկ նախընտրում են չարտահայտել իրենց քաղաքական հայացքները՝ հակադրելով մեծամասնության հակասող կարծիքին: 2020թ. 44-օրյա պատերազմից հետո հասարակության մեջ առաջացան խորը բաժանարար գծեր: Գելլափի հարցման համաձայն՝ հարցվածների 47%-ը խուսափում է քաղաքական թեմաներով քննարկումներից ընտանեկան և ընկերական միջավայրերում՝ կոնֆլիկտներից խուսափելու նպատակով: Սոցիալական ցանցերում քաղաքական գրառումների քանակը նվազել է, քանի որ օգտատերերի 59%-ը սկսել է ավելի զգույշ լինել քաղաքական կարծիք արտահայտելիս (CPFE, «Annual Report 2023», էջ 23-24):

Մեր կարծիքով Հայաստանի հետխորհրդային իշխանությունը երկար ժամանակ հարում էր Ֆուկոյի «կապիլյար» ձևակերպմանը, որը թույլ էր տալիս լռությունն ու

ինքնագնահատականը դարձնել իշխանական գործընթացի մաս: Նորանկախ Հայաստանի առաջին տասնամյակին բնորոշ են նաև Նորբերտ Էլիասի քաղաքակրթական նորմերն ու «ինքնազսպվածության» դերը, ինչը անցումային հասարակության ներառական վարքի դրսևորում է: Իսկ ահա Էլիասի մեկ այլ՝ «ֆիգուրատիվ տեսությունը» կարևորում է մշակույթների և սերունդների ձևավորած վարքային բնույթն ու կարգապահությունը և, ինչպես մի շարք զարգացած երկրներում, քաղաքական զսպվածությունը դառնում է ողջամտության և փոխհարգանքի ցուցիչ: Այս տեսությունը մեր երկրում ամբողջությամբ կիրառելի դեռ չի կարելի համարել, քանզի քաղաքական զսպվածության արդյունքում ձևավորված հաղորդակցությունը միշտ չէ, որ առանձնանում է իր դրական հետևանքներով: Էլիասի տեսանկյունից՝ նորմի պահպանությունը (օրինակ՝ «քաղաքական լռության» ավանդույթը պետական մարմիններում) ոչ թե զուտ դիսկուրսիվ սահմանափակում է, այլ՝ միջին դասի՝ ինստիտուցիոնալ հեղինակության ձևավորում: Մասնավորապես՝ 2020–ից հետո Հայաստանում, երբ հասարակական-պետական ճգնաժամերը ռեպրեսիվ են, քաղաքակրթական նորմերը դառնում են հարմարվողականության գործիք՝ քաղաքական լեզվի, հաղորդակցության ձևերի նորմավորման համար: Հայաստանին առնչվող միջազգային տարբեր հետազոտություններ փաստում են, որ քաղաքական զսպվածությունը դիտարկվում է որպես «չխախտվող» նորմ, այլ ոչ թե ակնհայտ վախի արտահայտություն, ինչը ձևավորվել է չստացված կամ վատ հաղորդակցման արդյունքում: Վերջին 5 տարում Հայաստանում քաղաքական զսպվածության ինստիտուցիոնալացումը դարձել է ոչ միայն վարչական, այլ նաև եթերի լեզվի անփոփոխ մաս: Մեր կարծիքով սա կարող է դիտարկվել թե՛ որպես սոցիալական պատասխանատվության բարձրացման հետևանք, թե՛, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, կողմնորոշվելու արագ մեխանիզմ: Հայաստանում, հատկապես 2018–ի հեղափոխությունից հետո սոցմեդիան դարձել է քաղաքական դիսկուրս ձեևավորելու նպաստավոր միջավայր: Հեղափոխությունից հետո քաղաքական պաշտոնյաները և հանրային գործիչները պակաս զգուշությամբ են մոտենում արտահայտվելու ազատությանը՝ երբեմն անտեսելով ցանցային վերահսկումը (պանօպտիկոն) և այն,որ դա կարող է իրավական և սոցիալական ռիսկ դառնալ: Սոցիալական հարթակներում սակայն քաղաքական զսպվածությունը, մեր դիտարկմամբ, խախտվում է հատկապես ընդդիմադիր ճամբարների հակամարտությունը սրելու նպատակով: Մի կողմը իրրեն թույլ է տալիս մրցակցի հասցեին բազում վիրավորանքներ և անպատասխան չի մնում: Այս միտումը, սակայն, պետք է դիտարկել քաղաքական զսպվածության տիրույթում և դրանից դուրս, քանի որ այն ծավալվելու, վիրավորանքի և զրպարտության վերածվելու հակումներ է ցուցաբերում, ինչն այս պահին դուրս է մեր հետազոտության շրջանակից: Մեր կարծիքով, այս երևույթը ձևավորում է հանրային գործչի, պետական պաշտոնյայի նոր տեսակ, երբ սոցիալական հարթակներում սկսում են քաղաքական զսպվածության սահմանը հատել հենց այն պահին, երբ իրենց քաղաքական ուժի ղեկավարն առաջինն է դա անում: Սա կանաչ լույսի ազդեցություն է դառնում մյուսների համար, ովքեր առանց վարանելու սկսում են քարկոծել հակառակորդ ճամբարին՝ վստահ լինելով, որ դրան որևէ պատիժ չի հաջորդելու: Այնուամենայնիվ անգամ այս տեղեկատվական գրոհների ժամանակ հանրային ծառայողները հիմնականում զերծ են մնում քաղաքական զսպվածությունը խախտելուց: Լրատվական կայքերի մոնիթորինգային «Մաքսմոնիթոր» ծրագրի միջոցով իրականացրած որոնումների արդյունքում մեզ համար պարզ դարձավ, որ վերջին 6 տարում մամուլում չի հիշատակվել քաղաքացիական ծառայության բարձր պաշտոն զբաղեցնող որևէ մեկի անունը, որ իր գրառումներով, հանրային հրապարակային ելույթներով կամ հարզազրույցներով ցուցաբերել է քաղաքական զսպվածությունը խախտելուն բնորոշ գործողություններ, ինչը չի կարելի ասել փաստաբանների, քաղաքական գործիչների, խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերի մասին (info.maxmonitor.am/ 2018-2025թթ

հունվարի 30, փնտրվող արտահայտություններ են՝ քաղաքական զսպվածություն, քաղաքական չեզոքության խախտում, հանրային ծառայողի գրառում):

Քաղաքացիական հասարակության դերը քաղաքական զսպվածության հաղթահարման գործընթացում

Հայաստանում քաղաքացիական հասարակության ինստիտուտները վերջին տասնամյակներում զգալիորեն զարգացել են և դարձել են ժողովրդավարական գործընթացների կարևոր դերակատար (Քաղաքացիական հասարակություն, Վիքիպեդիա, 2014-09-15): Քաղաքացիական հասարակությունը, ըստ Օրհուսի կոնվենցիայի, գիտակից հանրություն է, որն իր ակտիվ մասնակցությամբ հակակշռում և հավասարակշռում է պետական իշխանությանը (նույն տեղում): Այս կառույցները հանդես են գալիս որպես ֆորում՝ ժողովրդավարական իդեալների հետագա զարգացման համար, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ավելի ժողովրդավարական պետության (նույն տեղում):

Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունները (ՔՀԿ-ներ) իրականացնում են բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված սոցիալական աջակցության, ներառական կրթության, համայնքային զարգացման և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության ոլորտներում (Թադևոսյան 5-6): ՔՀԿ-ների գործունեությունը, ըստ հետազոտությունների, ունի իր ազդեցությունը ինչպես նեղ ոլորտային հիմնախնդիրների, այնպես էլ, ընդհանուր առմամբ, Հայաստանում ժողովրդավարացման գործընթացի տեսանկյունից (նույն տեղում):

Միևնույն ժամանակ, չի կարելի ասել, որ քաղաքացիական հասարակության գործունեությունը հանգեցրել է Հայաստանի հասարակության ամբողջական ժողովրդավարացման: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հաճախ բախվում են ֆինանսական անկայունության, քաղաքական ճնշումների և հանրային վստահության պակասի խնդիրների: Սակայն, նույնիսկ այս պայմաններում, քաղաքացիական հասարակությունը նպաստում է պետական իշխանության հավասարակշռմանը և հասարակական վերահսկողության իրականացմանը:

Ռոբերտ Փաթնամի պնդմամբ քաղաքացիական հասարակության նույնիսկ ոչ քաղաքական կազմակերպությունները կենսական նշանակություն ունեն ժողովրդավարության համար, քանի որ դրանք հասարակության ներսում ստեղծում են սոցիալական կապիտալ, վստահություն և ընդհանուր արժեքներ: Սա կարևոր է հատկապես այն պայմաններում, երբ քաղաքական զսպվածությունը կարող է վերածվել ինքնագրաքննության և հանրային դիսկուրսի սահմանափակման:

Խոսքի ազատության սահմանադրական երաշխիքներն ու դրանց կիրառումը պրակտիկայում

Օրենսդրության փիլիսոփայությունը հուշում է, որ արտահայտվելու ազատությունը չի կարող լինել բացարձակ, եթե այն հակասում է այլ անձանց կամ հասարակության իրավունքներին ու շահերին կամ սպառնում է ազգային անվտանգությանը (Barendt 5-7): Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածը երաշխավորում է կարծիքի արտահայտման ազատությունը, սակայն հստակ սահմանում է, որ այն կարող է սահմանափակվել օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության, բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի պաշտպանության նպատակով (Constitution of the Republic of Armenia, 2015, հոդված 42): Այս դրույթը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին, որը նույնպես ճանաչում է խոսքի ազատության սահմանափակման հնարավորությունը (The Council of Europe, հոդված 10):

Վենետիկի հանձնաժողովի 2021թ. «Կարծիք Հայաստանում արտահայտվելու ազատության օրենսդրության վերաբերյալ» փաստաթղթում նշվում է, որ Հայաստանը պետք է հստակեցնի այն սահմանները, որոնցում պետական պաշտոնյաները կարող

են արտահայտել իրենց անձնական կարծիքը՝ միաժամանակ պահպանելով պաշտոնական դիրքի անկողմնակալությունը (Venice Commission 2021, պարբերություն 45-47):

Գործնականում, օրենսդրական ընդհանուր ձևակերպումները հաճախ անորոշություն են ստեղծում: Օրինակ՝ մեկ «լայքը» կամ սոցիալական ցանցում հավանության նշանը կարող է ճակատագրական լինել պաշտոնատար անձի համար: Դատավորները, պետական պաշտոնյաները և այլք հաճախ խուսափում են նույնիսկ անուղղակի կերպով մասնակցելուց քաղաքական դիսկուրսին՝ չգիտակցելով, թե որտեղ է անցնում «թույլատրելի է» և «պետք չէ» սահմանագիծը (Harutyunyan 112):

2021թ. ՀՀ քրեական օրենսգրքում ներմուծվեց «ծանր վիրավորանքի» հոդվածը, որը քրեականացնում էր հրապարակային ծանր վիրավորանքը: Այս փոփոխությունը քննադատվեց իրավապաշտպան կազմակերպությունների կողմից՝ որպես խոսքի ազատության սահմանափակման գործիք (Human Rights Watch 2022): 2022թ. այս հոդվածի հիման վրա հարուցվեց շուրջ 30 քրեական գործ (CPFE, Annual Report 2022, 14-15):

COVID-19 համավարակի ընթացքում ՀՀ կառավարությունը սահմանեց տուգանքներ՝ արտակարգ դրության պայմաններում ապատեղեկատվություն տարածելու համար: 2020թ. մարտ-հունիս ամիսներին 22 լրատվական կայք ստիպված եղավ փոփոխել կամ հեռացնել իր հրապարակումները (Freedom House 2021): Միջազգային կազմակերպությունները մտահոգություն հայտնեցին, որ այս մեխանիզմը կարող է օգտագործվել քաղաքական քննադատությունը ճնշելու նպատակով: 2023թ. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից մի շարք հեռուստաընկերություններ տուգանվեցին «հակառակ կողմի դիրքորոշումը չներկայացնելու» համար, ինչն առաջացրեց բանավեճ խմբագրական անկախության և հավասարակշռված լուսաբանման չափանիշների շուրջ (CPFE, Annual Report 2023, էջ 21-22):

Հայաստանի փոքր համայնքներում քաղաքական ակտիվությունը հաճախ սահմանափակվում է սոցիալական նորմերով: 2021թ. մարզերում անցկացված հետազոտության համաձայն՝ գյուղական համայնքների բնակիչների 73%-ը նշել է, որ քաղաքական կարծիք արտահայտելիս հաշվի է առնում համայնքի մյուս անդամների հնարավոր ռեակցիան (Socioscope, Local Democracy in Armenia: Challenges and Opportunities, 2022, 44-45): Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընդդիմադիր թեկնածուները հաճախ առերեսվել են ոչ ֆորմալ ճնշումների՝ սկսած տնտեսական սպառնալիքներից մինչև սոցիալական մեկուսացում (Ishkhanyan 95):

Հաշվի առնելով տարբեր տարիներին իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները՝ մենք իրականացրել ենք խորքային անհատական հարցազրույցներ, որոնք փաստում են քաղաքական զսպվածության սռկայությունն ու դրանով պայմանավորված վարքագծի դրսևորումը: Ներկայացնում ենք հարցաշարն ու հետազոտության արդյունքները:

Խորքային անհատական հարցազրույցի հարցաշար

Նշում. Տարիքային խմբեր. (30–40տ., 40–55տ., 55+):

Սեռ՝. կին/տղամարդ: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններում վարչության պետեր են, որ ունեն դասային բարձր աստիճան:Հարցումն իրականացվել է 2025 թվականի մարտի 20–ից 29–ը:

Հարցաշար

1. Անձնական վերաբերմունք.

Ի՞նչ նշանակություն ունի Ձեզ համար «քաղաքական զսպվածություն» արտահայտությունը: Ձեր աշխատանքում ինչպե՞ս եք սահմանազատում

«անձնական կարծիքը» և «պաշտոնական դիրքորոշումը»: Քաղաքական լռությունը ձեզ համար անձնական արժեհամակարգի՞, թե՞ համակարգային պահանջի դրսևորում է:

2. Վարչարարական վարքագիծ.
Որքանո՞վ է քաղաքական զսպվածության պահանջը ազդում ձեր որոշումների կայացման ընթացքի վրա: Արտահայտվելիս Դուք տարբերություն դնու՞մ եք փակ խորհրդակցությունների (ներքին տիրույթ) և հանրային ելույթների միջև: Հաճախ եթերում/հանրային խոսքում ձեզ վերահսկու՞մ եք, կամ ստիպու՞մ եք Ձեզ «ավելի քիչ ասել» կամ «ավելի կաղապարված ձևով ներկայացնել»:

3. Չափորոշիչներ և սահմաններ.
Քաղաքական թեմաներով խոսելիս ունե՞ք «կարմիր գծեր»: Ընդունո՞ւմ եք ուրիշների զգուշավոր խոսելու պատճառները, թե՞ վիրավորվում եք Ձեզ չվստահելու համար: Թվարկեք այն թեմաները, որոնց շուրջ չեք խոսի, նույնիսկ եթե անձամբ ուժեղ դիրքորոշում ունեք: Որքանո՞վ է ձեր անձնական սահմանափակումը գալիս «վախից» և որքանո՞վ՝ «պաշտոնական էթիկայից»:

4. Հասարակության հանդեպ վերաբերմունք.
Ձեր կարծիքով՝ հասարակությունն ի՞նչ ակնկալիք ունի պետական պաշտոնյաներից. «բաց խոսք», թե՞ «զսպվածություն»: Արդյո՞ք հասարակության մեջ քաղաքական զսպվածություն դրսևորելը համարվում է արժանիք, թե՞ այն ընկալվում է որպես թուլություն:

5. Սեռատարիքային և անձնական ընկալումներ.
Համաձա՞յն եք, որ տարբեր սերնդի պաշտոնյաների մոտեցումն այլ է. օրինակ՝ երիտասարդ պաշտոնյաները՝ ավելի համարձակ, տարիքովները՝ ավելի զգուշավոր են: Ինչպե՞ս եք գնահատում կանանց/տղամարդկանց վարքագծում տարբերությունները. առավել համարձակ խոսքն ո՞ւմ է բնորոշ՝ տղամարդկա՞նց, թե՞ կանանց:

6. Բաց հարցեր.
Եթե չլիներ որևէ իրավական սահմանափակում, ապա ինչպիսի՞ն կլիներ Ձեր անձնական տրամադրվածությունը՝ քաղաքական թեմաներով ազատ խոսելու հարցում:
Ձեր պատկերացմամբ՝ ինչպե՞ս կարելի է փոխել համակարգը, որպեսզի համադրի և՛ պաշտոնական զսպվածությունը, և՛ ազատությունը:

Մոդելային վերլուծություն

Հարցազրույցներին մասնակցել է 11 պետական պաշտոնյա՝ 4-ը օրենսդիրից, 4-ը գործադիրից և 3-ը դատական համակարգից: Սեռային կշիռը գրեթե հավասար էր՝ 6 տղամարդ, 5 կին: Տարիքային պատկանելությունը ընդգրկում էր երեք խմբեր. 3-ը՝ 30–40 տարեկան, 5-ը՝ 40–55, և 3-ը՝ 55-ից բարձր:

I. **Քաղաքական զսպվածության ընկալում.**

Հարցվածներն «քաղաքական զսպվածության» եզրը տարբեր կերպ էին սահմանում երիտասարդ պաշտոնյաների համար (30–40տ.) այն «զսպաշապիկի պարտադրանք» էր, միջին սերնդի համար (40–55տ.)՝ «պաշտոնեական տառն ու պատասխանատվության կոդեքս», իսկ միջին տարիքից բարձրերի համար (55+)՝ «պետական կայունության երաշխիք»: Սա ցույց է տալիս, որ նույն երևույթը սերնդային տարբեր ընկալում ունի. երիտասարդներն ավելի շատ դա ընկալում են որպես կաշկանդող գործիք, իսկ ավագները՝ որպես «խաղի կանոն»:

II. **Վարչարարական ազդեցություն.**

Գերակշռում էր այն կարծիքը, որ որոշումների ընդունման ժամանակ զսպվածությունը հիմնականում ոչ թե սահմանափակում է ընտրությունը, այլ

թելադրում է արտահայտման ձևը: Օրենսդիր թևի ներկայացուցիչները նշում էին, որ պառլամենտական համակարգում քաղաքական զսպվածությունը դրսևորվում է «խուսափողական պատասխաններով», մինչդեռ գործադիր իշխանության ներկայացուցիչները այն ավելի շատ վերագրում էին ճշգրիտ խոսք ունենալուն: Դատական իշխանության դերակատարները գիտակցաբար ձգտում էին ամեն կերպ հեռու մնալ քաղաքական դիրքորոշումներից՝ անգամ նշելով, որ «լռությունն ավելի ապահով է»:

III. **Սահմանների ընկալում**.

Պաշտոնյաների մեծ մասը առանձնացնում էր երեք գիծ՝ անհանդուրժողականության թեմաներ՝ (ազգային անվտանգություն, պատերազմ, եկեղեցու դեր) որպես «կարմիր գիծ», Ինստիտուցիոնալ դիրքորոշման կաշկանդողություն. («Իմ կարծիքը չեմ կարող ասել, որովհետև այն կներկայացվի որպես նախարարության դիրքորոշում»), անձնական ինքնապաշտպանություն. («Իմ ընտանիքը չի ցանկանա, որ իմ խոսքը պատրվակ դառնա իրենց վնասելու համար»): Այս մոտեցումներում քիչ էր նկատվում վախը, սակայն առկա էր խոր կաշկանդվածություն:

IV. **Սեռատարիքային պատկեր.**

Տղամարդ պաշտոնյաները համեմատաբար ավելի պատրաստ էին «քաղաքական զսպվածությունը որպես խաղի կանոն» ընդունելու, մինչդեռ կանայք այն նկարագրում էին որպես ավելորդ սահմանափակում իրենց մասնագիտական ինքնության համար: Տարիքային տարբերությունը զգալի էր. երիտասարդ պաշտոնյաները (30–40տ.) խոսում էին ազատության պակասից և իրենց համարձակությունը չդրսևորելու արգելքից: Միջին տարիքի պաշտոնյաներն իրենց կաշկանդվածությունը կապում էին «աշխատանքային անվտանգության և իշխանությունում երկարաժամկետ մնալու» հետ: Ավագները առավելապես դա դիտարկում էին որպես «պետական ինստիտուցիոնալ կայունություն ունենալու մանդատ»:

V. Հասարակության նկատմամբ ընկալում

Հարցված պաշտոնյաներից 7-ը կարծում էր, որ հասարակությունն ակնկալում է իրենցից «քաղաքական լռություն», մինչդեռ 4-ը նշեց, որ հանրային կարծիքը լռությունը վերագրում է թուլությանը: Այս հակասությունը վկայում է, որ պաշտոնյաները երկմտանքի մեջ են. իրենց վարքագծի պահանջները չեն համընկնում հանրային սպասումների հետ:

Քաղաքական զսպվածության նվազեցմանը միտված առաջարկություններ

Քաղաքացիական կրթության զարգացումը կարևոր նախապայման է քաղաքական զսպվածության հաղթահարման համար: Կարևոր է ունենալ գրագետ երիտասարդություն, որը տեր է կանգնում իր իրավունքներին և բարձրաձայնում՝ չհանդուրժվող երևույթները: 2019-2023թթ. «Քաղաքացիական կրթություն» ՀԿ-ն իրականացրել է «Ակտիվ քաղաքացի» ծրագիրը, որի շրջանակում ավելի քան 5000 երիտասարդ անցել է քաղաքացիական մասնակցության դասընթացներ: Ծրագրի արդյունքում մասնակիցների 62%-ը նշել է, որ սկսել է ավելի ակտիվորեն մասնակցել համայնքային որոշումների կայացմանը (Active Citizen Armenia, “Annual Report 2023”):

Մեդիագրագիտության բարձրացումը ևս կարող է նպաստել քաղաքական զսպվածության մեղմացմանը և սեփական կարծիքն ուղիղ արտահայտելու համարձակությանը: 2021-2023թթ. Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը 10 մարզերում անցկացրել է «Քննադատական մտածողություն և մեդիագրագիտություն» դասընթացները՝ թիրախավորելով ուսուցիչներին և ավագ դպրոցականներին: Նման ծրագրերը նպաստում են քաղաքացիների՝ տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու կարողությունների զարգացմանը (Media Initiatives Center 2023):

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ամրապնդումը նույնպես առանցքային նշանակություն ունի: 2020-2023թթ. «Քաղաքացիական հասարակության զարգացման ինստիտուտը» իրականացրել է «Ուժեղ ՔՀԿ-ներ»

ծրագիրը, որի շրջանակում ավելի քան 50 հասարակական կազմակերպություն ստացել է դրամաշնորհներ ինստիտուցիոնալ զարգացման համար: Ծրագրի արդյունքում այս կազմակերպությունների 73%-ը բարելավել է ադվոկացիոն կարողությունները և սկսել ավելի արդյունավետ մասնակցել հանրային քաղաքականության մշակման գործընթացներին (Civil Society Institute 2023): Սա վկայում է քաղաքացիական հասարակության դերի կարևորության մասին. հաշվետու պետությունն ու ակտիվ քաղաքացիական հասարակությունը փոխադարձաբար խթանում են միմյանց՝ ձևավորելով ավելի պահանջկոտ և ինքնավստահ հասարակություն (Howard 87-88):

Քաղաքական զսպվածությունը Հայաստանում բարդ երևույթ է, որը պայմանավորված է ինչպես պատմական, այնպես էլ արդի իրավական և սոցիալական գործոններով: Այս երևույթի հաղթահարումը պահանջում է համակարգային մոտեցում՝ ներառելով իրավական բարեփոխումներ, քաղաքացիական կրթություն և մեդիագրագիտություն: Քաղաքական մասնակցության ակտիվացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հաղթահարվում են վախի մթնոլորտը, անտարբերությունն ու ինքնագրաքննությունը (Ishkhanyan 104):

Քաղաքական զսպվածության դրսևորման այլ հարթակներ

Արդյո՞ք քաղաքական զսպվածության հիմքում կարող է լինել նաև հեռատեսությունը: Սթայն Ռինգենը «Ժողովրդավարության տեսքը» (2020) աշխատությունում նշում է, որ հեռատեսությունը՝ որպես քաղաքական զսպվածության հիմնավորում, կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ նպաստում է սոցիալական համախմբվածությանը և երկարաժամկետ կայունությանը (Ringen 112): Սակայն շատ հաճախ «հեռատեսության» պատճառաբանությունը դառնում է պարզապես քաղաքական պատասխանատվությունից խուսափելու միջոց:

Քաղաքական զսպվածության անտեսման հետևանքները կարող են լինել բազմազան՝ սկսած սոցիալական պիտակավորումից մինչև աշխատանքի կորուստ: Հատկապես սոցիալական մեդիայի դարաշրջանում սեփական տեսակետները քաղաքական զսպվածությամբ չփաթեթավորածները հաճախ են զրկվում աշխատանքից: Մուն և Վոնգի (2018) ուսումնասիրությունը փաստում է, որ սոցիալական մեդիայի դարաշրջանում քաղաքական արտահայտությունը դարձել է «հրապարակային ինքնության» (public identity) մաս, որը կարող է ունենալ իրական հետևանքներ անհատի կյանքում: Սա առաջացնում է «ցանցային պանոպտիկոնիզմ» (networked panopticism), երբ մարդիկ զգում են, որ իրենց առցանց գործողությունները մշտապես հսկվում են (Moon and Wong 54-55):

Հանրային կամ պետական ծառայողի կողմից իրեն դուր եկած ծաղրական նյութը, քաղաքական հումորը լայքելը կամ մեկնաբանություններ թողնելը՝ ոչ միանշանակ ընդունվող հրապարակումների ներքո, օրենսդրորեն դիտարկվում է որպես քաղաքական զսպվածության խախտում: Հանրային ծառայողները պարտավոր են ցանկացած հանգամանքում դրսևորել քաղաքական զսպվածություն, ինչը տարածվում է իշխանության բոլոր ճյուղերի աշխատակիցների վրա (Harutyunyan 117): Սա, սակայն, հաճախ խոչընդոտում է ազատ արտահայտվելուն, հատկապես սեփական միկրոբլոգում:

Եզրակացություն

Մեր դիտարկմամբ՝ քաղաքական զսպվածությունը Հայաստանում ոչ թե պարզապես խոչընդոտ է խոսքի ազատության համար, այլ նաև հատուկ մշակութային «լռության ինստիտուտ», որն ապահովում է կարճաժամկետ կայունություն: Սակայն երկարաժամկետ հեռանկարում այն բերում է թուլացած ժողովրդավարության և անվստահության պետական ինստիտուտների հանդեպ: Հետևաբար՝ լուծումը միայն իրավական չէ. կարևոր է հասարակության մեջ ձևավորել հանդուրժողական

քաղաքական մշակույթ, որտեղ այլընտրանքային կարծիքը չի ընկալվի որպես վտանգ, այլ՝ որպես հանրային բարիք: Քաղաքական զսպվածությունը Հայաստանում բազմաշերտ և բարդ երևույթ է, որի արմատները հասնում են ինչպես խորհրդային անցյալին, այնպես էլ արդի իրավական, սոցիալական և մշակութային գործոններին: Հոդվածում վերլուծվում են քաղաքական զսպվածության դրսևորումները պետական կառավարման, հանրային ծառայության, մեդիայի ու հասարակական դիսկուրսի տարբեր մակարդակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում խոսքի ազատության սահմանադրական երաշխիքներին, օրենսդրական սահմանափակումներին ու դրանց կիրառման պրակտիկ խնդիրներին: Քաղաքացիական հասարակության, մեդիագրագիտության և կրթության զարգացումը դիտարկվում են որպես քաղաքական զսպվածության հաղթահարման կարևոր գործոններ: Միևնույն ժամանակ, ընդգծվում է, որ քաղաքական զսպվածության՝ չափից ավելի կիրառումը կարող է հանգեցնել ինքնագրաքննության, հանրային անտարբերության և սոցիալական պիտակավորման: Այս ամենը հաղթահարելու համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում՝ ներառելով իրավական բարեփոխումներ, կրթական ծրագրեր և հանրային դիսկուրսի բազմազանություն: Միայն այս կերպ հնարավոր կլինի ձևավորել ժողովրդավարական, ներառական և կայուն հասարակություն: Կարելի է փաստել նաև, որ Հայաստանում քաղաքական զսպվածությունը ունի երկակի բնույթ. այն մի կողմից պահպանում է սոցիալական կայունությունը, մյուս կողմից վերածվում է հանրային լռության ինստիտուտի: Դրա հաղթահարման առանցքային ուղին ոչ այնքան իրավական բարեփոխումներն են, որքան մշակութային մոտեցումները, քաղաքական կարծիքի հանդուրժողության ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էլիաս, Նորբերտ. *Քաղաքակրթության գործընթացը*. Երևան, 2012:
2. Թադևոսյան, Արա և Ազատյան, Օլգա. *Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության ազդեցությունը Հայաստանում*. 2022:
3. Հակոբյան, Ա. «Քաղաքական դիսկուրսի զարգացումը Հայաստանում». *Socioscope*, 2019:
4. Քաղաքացիական հասարակության ինստիտուտ. *Ուժեղ ՔՀԿ-ներ ծրագրի ամփոփիչ զեկույց*. 2023:
5. “Armenia: Criminal Defamation Law Threatens Free Speech.” Human Rights Watch, 2022.
6. *Armenian Journal of Sociology*. vol. 8, no. 2, 2022.
7. Barendt, Eric. *Freedom of Speech*. Oxford University Press, 2019.
8. Bourdieu, Pierre. *The Field of Cultural Production*. Columbia University Press, 1993.
9. *Constitution of the Republic of Armenia*. Adopted 6 Dec. 2015, art. 42.
10. CPFE (Committee to Protect Freedom of Expression). “Annual Report 2022.” 2022.
11. CPFE. *Annual Report 2023*. 2023, https://khosq.am/wp-content/uploads/2024/01/CPFE-ANNUAL-2023-ENG.docx. Accessed: 10.09.2025.
12. Eliade, Mircea. *The Sacred and the Profane: The Nature of Religion*. Harcourt, 1959:
13. “Freedom in the World 2021: Armenia.” *Freedom House*, 2021.
14. Harutyunyan, Arman. “Social Media and Political Neutrality in Armenia.” *Armenian Folia Anglistika*, Vol. 18, Issue 2 (26), 2022.
15. Howard, Marc Morjé. *The Weakness of Civil Society in Post-Communist Europe*. Cambridge University Press, 2003.

16. Ishkhanyan, Lilit. “Political Participation and Social Pressure in Rural Armenia.”, https://www.civicus.org/images/stories/csi/csi_phase2/Armenia.pdf
17. Karaghanyan, Aghavni. *Political Culture Case Studies*. 2010.
18. Linklater, Andrew. *The Problem of Harm in World Politics*. Cambridge University Press, 2011.
19. Media Initiatives Center. *Critical Thinking and Media Literacy Project Report.* 2023.
20. Mouffe, Chantal. *The Democratic Paradox*. Verso, 2005.
21. Moon, Sue, and Wendy Wong. “Social Media and Political Participation: Panopticism in the Digital Age.” *New Media & Society*, vol. 20, no. 1, 2018, pp. 53–70.
22. Ringen, Stein. *What Democracy Is For: On Freedom and Moral Government*. Princeton University Press, 2020.
23. Socioscope. *Armenia after 2018: Social and Political Transformations*. 2024.
24. Socioscope. *Local Democracy in Armenia: Challenges and Opportunities*. 2022.
25. The Council of Europe. *European Convention on Human Rights*. art. 10.
26. Venice Commission. “Opinion on the Law on Freedom of Expression in Armenia.” *Council of Europe*, 2021.
27. “Why Modern Children’s Books Are Being Rewritten for Political Correctness.” *The Guardian*, 2022.

WORKS CITED

1. E'lias, Norbert. Qaghaqakrt'ut'yan gorc'y'nt'acy'. Erevan, [The Civilizing Process. Yerevan] 2012. (in Armenian)
2. T'adevosyan, Ara ev Azatyan, O'lga. Qaghaqaciakan hasarakut'yan kazmakerput'yunneri gorc'uneut'yan azdecut'yuny' Hayastanum. [The Impact of Civil Society Organizations’ Activities in Armenia] 2022: (in Armenian)
3. Hakobyan A. «Qaghaqakan diskursi zargacumy' Hayastanum». Socioscope, ["The Development of Political Discourse in Armenia." Socioscope] 2019: (in Armenian)
4. Qaghaqaciakan hasarakut'yan institut. Ujhegh QHK-ner c'ragri amp'op'ich zekuyc. [Final Report of the "Strong CSOs" Program] 2023: (in Armenian)

POLITICAL RESTRAINT IN ARMENIA: LEGAL, SOCIAL AND CULTURAL ASPECTS

TSOVINAR KHACHATRYAN
Brusov State University,
Research Center for Public Communication and Journalism, Senior Lecturer
Ph.D. in Philology,
Yerevan, the Republic of Armenia.

The aim of the article is to analyze the phenomenon of political restraint in the Republic of Armenia by examining its legal, social, and cultural foundations and manifestations across various public platforms. To achieve this aim, the following objectives have been established: studying the historical, legal, and social foundations of political restraint; analyzing its expressions at the levels of state governance, public service, media, and public discourse; revealing the role of civil society, media literacy, and education in overcoming political restraint; and assessing the consequences of political restraint—from social labeling to civic indifference and self-censorship. Sociological and legal analysis methods were applied. The data sources include scholarly literature, legislative documents, sociological surveys, and media analyses. The main conclusion of the research is that political restraint in Armenia is a multi-layered

phenomenon, whose overcoming requires a systemic approach, combining legal reforms, educational programs, and the diversity of public discourse. At the same time, it is essential to strike a balance between the protection of freedom of expression and the safeguarding of public responsibility, thereby avoiding both excessive self-censorship and the risks associated with unrestricted expression.

Keywords: *Political restraint, freedom of speech, self-censorship, public discourse, civil society, media literacy, religious ethics, social norms, cultural change, public service.*

ПОЛИТИЧЕСКАЯ СДЕРЖАННОСТЬ В АРМЕНИИ: ПРАВОВЫЕ, СОЦИАЛЬНЫЕ И КУЛЬТУРНЫЕ АСПЕКТЫ

ЦОВИНАР ХАЧАТРЯН
старший преподаватель центра исследований публичной коммуникации и журналистики Государственного университета имени В. Брюсова, кандидат филологических наук, г. Ереван, Республика Армения

Цель статьи — проанализировать феномен политической сдержанности в Республике Армения, рассматривая его правовые, социальные и культурные основания и проявления на различных общественных платформах. Для достижения цели поставлены следующие задачи: исследование исторических, правовых и социальных основ политической сдержанности; анализ проявлений политической сдержанности на уровне государственного управления, публичной службы, медиа и общественного дискурса; выявление роли гражданского общества, медиаграмотности и образования в преодолении политической сдержанности; оценка последствий политической сдержанности от социального навешивания ярлыков до гражданского равнодушия и самоцензуры. Использованы методы социологического и правового анализа. Источниками данных служили научная литература, законодательные акты, социологические опросы и медиа-анализы. Основной вывод исследования заключается в том, что политическая сдержанность в Армении представляет собой многослойное явление, преодоление которого требует системного подхода, сочетающего правовые реформы, образовательные программы и разнообразие общественного дискурса. Одновременно важно балансировать требования свободы слова и общественной ответственности, избегая как чрезмерной самоцензуры, так и крайней неограниченности высказываний.

Ключевые слова: *политическая сдержанность, свобода слова, самоцензура, общественный дискурс, гражданское общество, медиаграмотность, религиозная этика, социальные нормы, культурные изменения, государственная служба.*